

## **Համատեղ ծրագիր ՀՕՖ- Վնասվածքաբանության հանրապետական գիտական կենտրոն**

Համատեղ ծրագիրը, որի նպատակն է ՀՀ մարզերում երեխաների մոտ հենաշարժական համակարգի շեղումների վաղ հայտնաբերումը ու բուժումը կարելի է համարել սկսված:

Ծրագրի առաջին փուլը նախատեսվում է իրականացնել Շիրակի մարզում, այդ իսկ պատճառով առաջին աշխատանքային այցը կատարվեց Գյումրի ս/թ մայիսի 7-ին:

Այցի շրջանակներում աշխատանքային խումբը / Տ. Խանամիրյան-ՎՀԳԿ գիտական տնօրեն, Գ.Այվազյան-ՎՀԳԿ աշխատակից, վերապատրաստման ղեկավար, Հ. Մինոնյան ՀՕՖ-ի բժշկական ծրագրերի համակարգող/ իրականացրեց նախապես պլանավորված հանդիպումներ մարզի առողջապահական պատասխանատու պաշտոնյաների հետ և կազմակերպչական գործառույթներ: Արդյունքում հստակեցվեցին ծրագրի իրականացման ժամանակացույցը/ 11/06/2009թ-մեկօրյա սեմինար պարապմունք, 20/07-29/07/09-մեկշաբաթյա գործնական պարապմունք/ , վայրը/ ք.Գյումրի-«Գյումրու ծննդատուն» և «Մոր և մանկան ավստրիական հիվանդանոց», ընդգրկվող մասնակիցները ըստ մասնագիտությունների և բնակավայրերի, տեղական պատասխանատուները:

Հարկ է նշել, որ հիշյալ ծրագիրը ընդունվեց մեծ ոգևորությամբ՝ հաշվի առնելով վերջինիս արդիականությունը և կարևորությունը ազգաբնակչության համար: